

ՏԻՐՈՒՆԻ

Գ Է Ո Ր Գ Պ Ա Պ Ա Յ Ա Կ Ո Ր Ե Ա Ն

Ս. Աթոռոյ Միարանութիւնը վիշտը ունեցաւ կորսնցնելու աշխատաւոր միարաններու շարքին Գէորգ Պապա Յակոբեանը:

Հանգուցեալը ծնած է Նոյեմբեր 1889ին, եւ ծառայած է իբրեւ զերմակ Թրքական բանակին մէջ, եւ վերջապէս հաստատուած Հալէպ:

1962 Հոկտեմբերին խնդրամատոյց կ'ըլլայ Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովին՝ մասնելու միարան աշխատաւորներու շարքին մէջ: Կ'ընդունուի իր խնդրանքը եւ իբր միարան կը զրկուի Ս. Յարութիւն, ուր կը ծառայէ հաւատարմութեամբ եւ սիրով:

Վերջին ամսուան մէջ կ'ունենայ կաթուած եւ կը փոխադրուի Ֆրանսական հիւանդանոց ուր կը վախճանի 28 Օգոստ. 1970ին, եւ ծոյն օրը յետ միջօրէին, Թաղման կարգը կատարուելով կը Թաղուի Ս. Փրկչի գերեզմանատունը:

Հանգիստ իր Հոգւոյն:

տորուեցաւ հոգեհանգիստեան պաշտօն՝ Հայ մաքի վստասկաւոր մականերու հոգիներուն համար

* Եր. 18 Յուլիս.— Ս. Տրդատայ քաղ. մերայ եւ Աշխէն Տիկնայն եւ Խաթաճիկյաւոյն: Ս. Պատարաւոր մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգւ. Տ. Կիրակ Մ. Վրդ. Գարեկեան:

— Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախապահէջ Գերշ. Տ. Նորայր Եղիշեկոպոս:

* Կիր. 19 Յուլիս.— Գիւտ Տիգր Ս. Աստուածանի: Ս. Պատարաւոր մատուցուեցաւ Գեթնեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գեղեմանին վրայ: Ժամարարն էր Պոլսէն հիւրաբոր Ս. Աթոռ Ժամանած Աթ. Տ. Բարթող Պաշակիր Քննչ. Խրքանէան: Երթուղարձի Թափերներուն նախապահէջ Գերշ. Տ. Նորայր Նպս. Պապրեան:

* Ուր. 24 Յուլիս.— Նախատեսակին ի Ս. Եսայի Նախապահէջ Գերշ. Տ. Նորայր Եղս. Պապրեան:

* Եր. 25 Յուլիս.— Ս. Նրիստասան առաքելոյն Քրիստոսի եւ Պողոսի՝ Երեմասաներոյ առաքելոյն: Ս. Պատարաւոր մատուցուեցաւ Մայր Տաճարին Ս. Պողոս վերամատարան մէջ: Ժամարարն էր Աթ. Տ. Բարթող Պաշակիր Քննչ. Խրքանէան:

* Կիր. 26 Յուլիս.— Բարեկենդաւ վարդապաշտ պառն: Ս. Պատարաւոր մատուցուեցաւ ի Ս. Եսայի

Թիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ, Ժամարարն էր Հոգւ. Տ. Նարեկ Արք. Մարքազէլեան:

* Ուր. 31 Յուլիս.— Տապանակի տօնին նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կեց՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանգիստպետն էր Լուսաւորապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* Գշ. 14 Յուլիս.— Ֆրանսայի աղգային տօնին առթիւ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան Պատրիարքարանի կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսաւորապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ. Աստուած, ընդունելութեամբ Հոգւ. Տ. Կիրակ Մ. Վրդ. Գարեկեանի, Ասաղ Թարգման Հոգւ. Տ. Գլխադիր, Նապրեանի եւ Տիար Կարպետ Հիւրեղեանի:

* Գշ. 21 Յուլիս.— Պեմբրայի աղգային տօնին առթիւ, Պեմբրայի Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան Պատրիարքարանի կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսաւորապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ. Ասաղ Թարգման Հոգւ. Տ. Գլխադիր, Նապրեան եւ Տիար Կ. Հիւրեղեան: